Տեղեկություններ փախստականների և ապաստան հայցողների համար՝ Form I-9

Յուրաքանչյուր ոք, ով սկսում է աշխատել Միացյալ Նահանգներում որպես աշխատող, լրացնում է Form I-9-ը՝ պետական ձև, որի միջոցով գործատուները ստուգում են ձեր ինքնությունը և աշխատելու թույլտվությունը:

Այս փաստաթուղթը կօգնի ձեզ՝ որպես ապաստան հայցող կամ փախստական, լրացնել Form I-9-ը և իմանալ այս գործընթացում ձեր իրավունքների մասին: Գործատուները, որոնք խտրականություն են դրսևորում ձեր նկատմամբ՝ հիմք ընդունելով ձեր քաղաքացիությունը, ներգաղթի կարգավիճակը կամ ազգային ծագումը Form I-9-ի գործընթացի ընթացքում, կարող են խախտել Ներգաղթի և ազգության մասին օրենքը (Immigration and Nationality Act, INA):Կարդացեք այս հակախտրական օրենքի մասին՝ 8 U.S.C § 1324b:

Form I-9-ի Section 1-ում տրամադրեք տեղեկատվություն ձեր մասին:
Նշեք ձեր անունը և ձեր մասին այլ տեղեկություններ Form I-9-ի Section 1-ում: Դուք կարող եք խնդրել ինչ-որ մեկին օգնել ձեզ լրացնել այս բաժինը:Դուք պետք է նշեք վանդակը, որը ցույց է տալիս կարգավիճակը, որը ձեզ տալիս է աշխատանքի թույլտվություն: Փախստականները և ապաստան հայցողները համարվում են “alien authorized to work” («աշխատելու իրավունք ունեցող օտարերկրացիներ»), ուստի նշեք այս վանդակը Այս վանդակի կողքին կա դաշտ ավարտի ժամկետի համար: Քանի որ ձեր աշխատելու իրավունքի ժամկետը չի լրանում, ժամկետի ավարտի դաշտում գրեք «N/A» (նշանակում է «կիրառելի չէ»):

Form I-9-ի Section 2-ի համար նշեք ձեր գործատուի փաստաթղթերը ձեր ինքնության եւ աշխատանքի թույլտվության վերաբերյալ:
Form I-9-ը պարունակում է փաստաթղթերի երեք ցուցակ, որոնք կարող եք ներկայացնել Form I-9-ի Section 2-ի համար. List A (ձեր ինքնությունը և աշխատանքի թույլտվությունը հաստատող փաստաթղթեր), List B (ձեր ինքնությունը հաստատող փաստաթղթեր) և List C (ձեր աշխատանքի թույլտվությունը հաստատող փաստաթղթեր): Դուք պետք է ցույց տաք ձեր գործատուին ձեր ընտրությունը՝ կա՛մ մեկ փաստաթուղթ List A-ից, կա՛մ մեկ փաստաթուղթ List B-ից և մեկ փաստաթուղթ՝ List C-ից:Form I-9 instructions (Form I-9-ի հրահանգների) համաձայն, որոշ փաստաթղթեր, որոնք հայտնի են որպես receipts (ստացականներ), նույնպես ընդունելի են Form I-9-ի համար՝ տարբեր ժամանակահատվածների համար:

Դուք իրավունք ունեք ընտրել ընդունելի փաստաթղթերը, որոնք ցանկանում եք ցուցադրել Form I-9 Lists of Acceptable Documents (Form I-9 Ընդունելի փաստաթղթերի ցուցակներ)-ից: Ձեր գործատուն իրավունք չունի ձեզանից պահանջել ցույց տալ հատուկ փաստաթղթեր՝ հիմնվելով ձեր կարգավիճակի՝ որպես ապաստան հայցողի կամ փախստականի կամ ձեր ազգային ծագման վրա: Գործատուն, որը պահանջում է կոնկրետ փաստաթղթեր ցուցաբերում է խտրականություն՝ խախտելով օրենքը: Օրինակ, թեև դուք կարող եք ունենալ Աշխատանքի թույլտվության փաստաթուղթ

(Employment Authorization Document, EAD), փոխարենը կարող եք ցույց տալ այլ փաստաթուղթ, օրինակ՝ անձը հաստատող պետական փաստաթուղթ (List B-ի փաստաթուղթ) և անսահմանափակ Սոցիալական ապահովության քարտ (List C-ի փաստաթուղթ):

Դուք կարող եք ունենալ մի քանի տեսակի ընդունելի Form I-9-ի փաստաթղթեր:
Դուք կարող եք ցույց տալ I-94՝ Form I-9-ի համար: Դուք կամ կստանաք Ձեր I-94 քարտը, կամ կարող եք տպել I-94-ը Customs and Border Protection (Մաքսային և սահմանային անվտանքության ծառայություն) կայքից:

Եթե դուք փախստական եք, ձեր I-94 ստացական է List A-ի փաստաղթղի համար, որն ուժի մեջ է ձեր առաջին աշխատանքային օրվանից 90 օր: 90 օր հետո դուք պետք է ձեր գործատուին ցույց տաք կամ EAD կամ List B-ի փաստաթուղթ և անսահմանափակՍոցիալական ապահովության քարտ:

Եթե դուք ապաստան հայցող եք, կարող եք օգտագործել ձեր I-94-ը՝ որպես List C-իմշտական փաստաթուղթ, որի ժամկետը չի լրանում:

Ապաստան հայղոցմերը և փախստականները իրավասու են EAD-ի համար: Եթե ձեր EAD-ի ժամկետը լրացել է, բայց դուք դիմել եք ձեր EAD-ը թարմացնելու համար, կարող եք շարունակել աշխատել ձեր առկա EAD-ի հետ: Ձեր EAD-ի ժամկետի ավարտից հետո մինչև 540 օր դուք կարող եք շարունակել աշխատել՝ ցույց տալով ձեր գործատուին ձեր EAD-ը I-797C ստացականի ծանուցմամբ (ցույց տալով, որ կառավարությունը ստացել է ձեր EAD-ի երկարաձգման դիմումը): EAD ավտոմատ երկարաձգումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Ներգաղթյալների և աշխատողների իրավունքների բաժին (Immigrant and Employee Rights Section, IER):

Կարող եք նաև ցույց տալ կորած, վնասված կամգողացված փաստաթղթերի ստացականները:

Form I-9-ը լրացնելու համար ձեր փաստաթղթերը ցույց տալուց հետո ձեր գործատուին թույլատրվում է միայն սահմանափակ հանգամանքներում նորից ձեզանից փաստաթղթեր խնդրել: Կանոնները, թե երբ գործատուն պետք է նորից փաստաթղթեր պահանջի, քննարկվում են Handbook for Employers M-274 (Գործատուների համար M-274 ձեռնարկում)-ում

Եթե դուք ցույց եք տվել ձեր EAD-ը Section 2-ի համար, ձեր գործատուն կխնդրի մեկ այլ փաստաթուղթ մինչև ձեր EAD-ի ժամկետը լրանա՝ Form I-9-ի Section 3-ը լրացնելու համար: Այս փուլում դուք կարող եք ընտրել List A-ից փաստաթուղթ կամ List C-ից մեկ փաստաթուղթ, օրինակ՝ անսահմանափակ Սոցիալական ապահովության քարտը: Դուք կարող եք ցույց տալ նոր EAD, բայց դա պարտադիր չէ:

Եթե դուք նշել եք անսահմանափակ Սոցիալական ապահովության քարտ Section 2-ի համար՝ որպես աշխատանքի թույլտվության ապացույց, և Section 1-ում “alien authorized to work”-ի («աշխատելու

լիազորված օտարերկրացի») կողքին մուտքագրել եք «N/A» ժամկետի ավարտի համար, ապա ձեր գործատուն իրավունք չունի ձեզանից ավելի շատ փաստաթղթեր խնդրել: Գործատուները, ովքեր փաստաթղթեր են խնդրում՝ հիմնվելով ձեր ապաստանի կամ փախստականի կարգավիճակի վրա կամ հիմնվելով ձեր ազգային ծագման վրա, երբ դա չի պահանջվում, կարող են խախտել օրենքը: Զանգահարեք IER՝ լրացուցիչ տեղեկությունների համար այն մասին, թե երբ է ձեր գործատուին թույլատրվում լրացուցիչ փաստաթղթեր խնդրել ձեզանից:

Դուք կարող եք աշխատել մինչ սպասում եք ձեր Սոցիալական ապահովության համարին:

Եթե դուք աշխատանք եք ստանում, բայց դեռ չունեք ձեր Սոցիալական ապահովության համարը (Social Security number, SSN), Սոցիալականապահովության վարչությունը գործատուներին հրահանգում է, որ աշխատողներին թույլատրվի աշխատել՝ իրենց SSN-ին սպասելիս:

Ձեր գործատուն միշտ պետք է վճարի ձեզ կատարած աշխատանքի համար, նույնիսկ եթե դուք դեռ սպասում եք ձեր SSN-ին:

Եթե ձեր աշխատանքը սկսելու պահին չունեք ձեր SSN-ը, թողեք SSN վանդակը Form I-9-ի Section 1-ում դատարկ:

Եթե ձեր գործատուն օգտագործում է E-Verify-ը, E-Verify-ը գործատուներին հրահանգում է հետաձգել E-Verify գործի ստեղծումը, մինչև դուք ստանաք ձեր SSN-ը: Դուք կարող եք աշխատել այդ ընթացքում, եթե լրացրել եք Form I-9-ը: E-Verify-ի կանոնները նախատեսում են այս բացառությունը և գործատուներին տրամադրում են գործը ստեղծելու հրահանգներ:Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են www.e-verify.gov կայքում:

Ներգաղթյալների և աշխատողների իրավունքների բաժին (Immigrant and Employee Rights Section, IER)

Աշխատակիցների հարցերով թեժ գիծ **1-800-255-7688**

Զանգերը կարող են լինել անանուն, և հասանելի են լեզվական ծառայություններ:

www.justice.gov/ier

www.justice.gov/crt-espanol/ier

TTY 1-800-237-2515